Լևոնը և օղաբլիթները 1

Լևոնը շատ է սիրում օղաբլիթներ և գնացել է խանութ դրանց ետևից։ Օղաբլիթներ վաճառողը՝ պարոն Օղակը, խաղամոլ է, և Լևոնին առաջարկում է խաղ, որում հաղթելու դեպքում նա կվաստակի իր օղաբլիթը։ Խաղը հետևյալն է՝ տրված է ծառ , որի ամեն կողի վրա գրված է մեկ թիվ, որը ցույց է տալիս, թե քանի խնձոր կա այդ կողի վրա։ Ծառի վրա կա մարդուկ, ով սկզբում գտնվում է 1 համարով գագաթի վրա։ Խաղի ընթացքում Լևոնը և պարոն Օղակը մարդուկին տեղափոխում են մարդուկի ընթացիկ գագաթին հարևան գագաթ, որտեղ մարդուկը դեռ չի եղել։ Կողով անցնելիս մարդուկը ուտում է այդ կողի վրա գտնվող բոլոր խնձորները։ Խաղը սկսում է պարոն Օղակը։ Լևոնը և պարոն Օղակը կատարում են իրենց քայլերը միմյանց հաջորդելով։ Խաղն ավարտվում է, երբ խաղացողը այլևս չի կարող քայլ կատարել։ Ամբողջ ընթացքում մարդուկի կերած խնձորների քանակը նշանակենք x -ով։ Լևոնը հաղթում է, եթե x -ի մնացորդը k -ի վրա փոքր է a -ից։ Հակառակ դեպքում հաղթում է պարոն Օղակը։ Բայց քանի որ պարոն Օղակը գիտի, որ Լևոնը շատ խելացի է, նա դժվարացրել է խնդրի պայմանները։ Նա որոշել է, որ նրանք պետք է միանգամից անեն q-ական քայլ (հնարավոր է, որ վերջին խաղացողը կատարի q-ից քիչ քայլ)։ Ձեր խնդիրն է տրված ծառի, k -ի, a -ի և q -ի համար պարզել, թե ով կհաղթի, եթե երկուսն էլ օպտիմալ խաղան։

Մուտքային տվյալներ

Մուտքի առաջին տողում տրված են n , k , a և q թվերը ($1 \le a < k$, $1 \le q < n$) ։ Հաջորդող n-1 տողերում տրված է գրաֆի նկարագրությունը։ Ամեն տողում տրված են v1 , v2 և c թվերը, ինչը նշանակում է, որ կա կող v1 և v2 գագաթների միջև, որի վրա կա c հատ խնձոր ($1 \le v1$, $v2 \le n$, $v1 \ne v2$, $0 \le c \le 10^9$) ։

Ելքային տվյալներ

Ելքի միակ տողում պետք է տպել 1 բառ՝ Levon , եթե կհաղթի Լևոնը և MrCircle , Եթե կհաղթի Պարոն Օղակը։

Ենթախնդիր 1 $2 \le n \le 10$, $k = 2$, $q = 1$

Օրինակ

Մուտք.
```
7 2 1 2
1 2 3
2 3 2
1 4 1
4 5 0
4 6 7
6 7 2
```

Ելք.
```
MrCircle
```